**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան | 24-ը սեպտեմբերի 2021թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժնի պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչունց,

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժնի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

**հանձնաժողովի քարտուղար՝**

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

**Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:**

**28.09.2021թ., ժամը 11:00**-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
3. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական պարագաների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1. | «ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ |
| 2. | «Կուրացիո» ՍՊԸ |
| 3. | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ |
| 4. | «Երմեդ» ՍՊԸ |
| 5. | «Մեգիէլ» ՍՊԸ |
| 6. | «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

## 2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Ա. Մաղաքյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Չ/հ | Գնման առարկա | Չ/մ | Քանակը | Նախահաշվային գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Հիդրոֆոբ-մեմբրանային բակտերիովիրուսային մեխանիկական ֆիլտր | հատ | 500 | 1100000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 925,000 | 0 | 925,000 |
| 2 | Տաքացնող վերմակ մարմնի վերին հատվածի համար | հատ | 30 | 216000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 216,000 | 0 | 216,000 |
| 3 | Տաքացնող վերմակ մարմնի ստորին հատվածի համար | հատ | 30 | 216000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 216,000 | 0 | 216,000 |
| 4 | Տաքացնող վերմակ ամբողջ մարմնի համար | հատ | 10 | 72000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 72,000 | 0 | 72,000 |
| 5 | Հակամիկրոբային վիրակապ | հատ | 30 | 132000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 132,000 | 0 | 132,000 |
| 6 | Վիրակապ կոմպրեսս | հատ | 120 | 316800 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 316,800 | 0 | 316,800 |
| 7 | Կաթետերի ֆիքսման սպեղանի | հատ | 1500 | 375000 | | | | | |
| 8 | Կաթետերի ֆիքսման սպեղանի | հատ | 1500 | 217500 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 217,500 | 0 | 217,500 |
| 9 | Արտածծման կաթետեր 12 Fr | հատ | 300 | 225000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 66,000 | 0 | 66,000 |
| 10 | Արտածծման կաթետեր 14 Fr | հատ | 600 | 450000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 132,000 | 0 | 132,000 |
| 11 | Արտածծման կաթետեր 16 Fr | հատ | 700 | 525000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 12 | Ծայրամասային երակային կաթետեր 20G | հատ | 1000 | 750000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 13 | Ծայրամասային երակային կաթետեր 18G | հատ | 500 | 375000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 14 | Եռուղի 360*փականներով | հատ | 1200 | 360000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 15 | Սպինալ անզգայացման ասեղ ուղղորդիչով 25G | հատ | 60 | 186000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 180,000 | 0 | 180,000 |
| 16 | Սպինալ անզգայացման ասեղ ուղղորդիչով 25G | հատ | 60 | 186000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 180,000 | 0 | 180,000 |
| 17 | Սպինալ անզգայացման ասեղ ուղղորդիչով 25G | հատ | 450 | 1260000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 1,170,000 | 0 | 1,170,000 |
| 18 | Օրոգաստրալ զոնդ 28F | հատ | 120 | 240000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 19 | Վերքերի դրենավորման զսպանակային տարա | հատ | 50 | 200000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 200,000 | 0 | 200,000 |
| 20 | CO2 աբսորբեր | հատ | 20 | 408000 | 1 | «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ | 568,000 | 113,600 | 681,600 |
| 21 | Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, N 7,5 | հատ | 400 | 380000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 380,000 | 0 | 380,000 |
| 22 | Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, N8,0 | հատ | 400 | 380000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 380,000 | 0 | 380,000 |
| 23 | Չտիչ բակտերիո-վիրուսային շնչական կոնտուրի համար | հատ | 620 | 372000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 372,000 | 0 | 372,000 |
| 24 | Շնչական կոնտուր մեծահասակի | լրակազմ | 350 | 1382500 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 1,382,500 | 0 | 1,382,500 |
| 25 | Էպիդուրալ անզգայացման հավաքածու 18G | լրակազմ | 210 | 903000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 945,000 | 0 | 945,000 |
| 26 | Շնչական կոնտուր մեծահասակի | լրակազմ | 400 | 1800000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 1,800,000 | 0 | 1,800,000 |
| 27 | Փակ ասպիրացիոն համակարգ տրախեոստոմիկ փողի համար | լրակազմ | 270 | 1485000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 28 | Փակ ասպիրացիոն համակարգ էնդոտրախեալ փողի համար | լրակազմ | 100 | 550000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 500,000 | 0 | 550,000 |
| 29 | Տրախեոստոմիայի հավաքածու | լրակազմ | 5 | 500000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 500,000 | 0 | 500,000 |
| 30 | Կոննեկտոր շնչական, գոֆրեային ուղիղ | հատ | 200 | 237600 | 1 | «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ | 230,000 | 0 | 230,000 |
| 31 | Կոննեկտոր շնչական, գոֆրեային անկյունային, բրոնխոսկոպի պորտով | հատ | 150 | 594000 | 1 | «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ | 480,000 | 0 | 480,000 |
| 32 | Ինտուբացիոն ստիլետ միջին չափսի | հատ | 20 | 35620 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 40,000 | 0 | 40,000 |
| 33 | Ինտուբացիոն ստիլետ մեծ չափսի | հատ | 15 | 26715 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 30,000 | 0 | 30,000 |
| 34 | Լարան | հատ | 100 | 24000 | | | | | |
| 35 | Դիմակ լարինգեալ | հատ | 30 | 144000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 216,000 | 0 | 216,000 |
| | | | | | 2 | «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ | 216,000 | 0 | 216,000 |
| 36 | Դիմակ շնչական անեսթեզիայի չափահասի մեծ | հատ | 200 | 440000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 230,000 | 0 | 230,000 |
| 37 | Դիմակ շնչական անեսթեզիայի չափահասի միջին | հատ | 200 | 440000 | 1 | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ | 230,000 | 0 | 230,000 |
| 38 | Օքսիգենոթերապիայի դիմակ մեծահասակի | հատ | 150 | 105000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 105,000 | 0 | 105,000 |
| 39 | Օքսիգենոթերապիայի քթային փողակ մեծահասակի | հատ | 150 | 45000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 40 | Տոնոմետրի մանժետ չափահասի /միջին/ | հատ | 5 | 40000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 25,000 | 0 | 25,000 |
| 41 | Վիրակապ 10x8 | հատ | 500 | 88000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 70,000 | 0 | 70,000 |
| 42 | Վիրակապ 10x20 | հատ | 500 | 135000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 135,000 | 0 | 135,000 |
| 43 | Վիրակապ 10x25 | հատ | 500 | 150000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 150,000 | 0 | 150,000 |
| 44 | Վիրակապ 10x30 | հատ | 500 | 250000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 250,000 | 0 | 250,000 |
| 45 | վիրակապ ներծծող, 10x20 | հատ | 300 | 126000 | 1 | «Կուրացիո» ՍՊԸ | 126,000 | 0 | 126,000 |
| 46 | Կենտրոնական երակային կաթետերի հավաքածու եռաճյուղ | լրակազմ | 50 | 2250000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 47 | Էնտերալ սնուցման լուծույթ | հատ | 250 | 510000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 48 | Էնտերալ սնուցման լուծույթ | հատ | 200 | 1128000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 49 | Էնտերալ սնուցման համակարգ | հատ | 90 | 450000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 50 | Էնտերալ սնուցման համակարգ | հատ | 90 | 630000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 51 | Էնտերալ սնուցման համակարգ | հատ | 90 | 450000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 52 | Պետրիի թաս ապակե | հատ | 300 | 150000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 53 | Ինդիկատորային թուղթ PH 1-14 | հատ | 5 | 50000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 54 | Միզածորանային Ստենտ 6Fr | լրակազմ | 50 | 950000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 650,000 | 0 | 650,000 |
| | | | | | 2 | «Մեգիէլ» ՍՊԸ | 2,250,000 | 0 | 2,250,000 |
| | | | | | 3 | «ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ | 2,850,000 | 0 | 2,850,000 |
| 55 | Միզածորանային Ստենտ 7Fr | լրակազմ | 50 | 950000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 650,000 | 0 | 650,000 |
| | | | | | 2 | «Մեգիէլ» ՍՊԸ | 2,250,000 | 0 | 2,250,000 |
| | | | | | 3 | «ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ | 2,850,000 | 0 | 2,850,000 |
| 56 | Միզածորանային ստենտ 8Fr | լրակազմ | 10 | 190000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 130,000 | 0 | 130,000 |
| | | | | | 2 | «Մեգիէլ» ՍՊԸ | 450,000 | 0 | 450,000 |
| 57 | Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ | հատ | 50 | 950000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 700,000 | 0 | 700,000 |
| 58 | Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ | հատ | 50 | 950000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 59 | Միզային Ֆոլեյի կատետեր 12Fr | հատ | 10 | 5000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 5,000 | 0 | 5,000 |
| 60 | Միզային Ֆոլեյի կատետեր 14Fr | հատ | 50 | 25000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 25,000 | 0 | 25,000 |
| 61 | Միզային Ֆոլեյի կատետեր 16Fr | հատ | 50 | 25000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 25,000 | 0 | 25,000 |
| 62 | Միզային Ֆոլեյի կատետեր 18Fr | հատ | 50 | 25000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 25,000 | 0 | 25,000 |
| 63 | Միզային Ֆոլեյի կատետեր երկճյուղ 12 Fr | հատ | 10 | 60000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 50,000 | 0 | 50,000 |
| 64 | Միզային Ֆոլեյի կատետեր երկճյուղ 14 Fr | հատ | 20 | 120000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 100,000 | 0 | 100,000 |
| 65 | Միզային Ֆոլեյի կատետեր երկճյուղ 16 Fr | հատ | 30 | 180000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 150,000 | 0 | 150,000 |
| 66 | Միզային Ֆոլեյի կատետեր երկճյուղ 18 Fr | հատ | 20 | 120000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 100,000 | 0 | 100,000 |
| 67 | Քարահեռացման զամբյուղ | հատ | 25 | 1750000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 1,750,000 | 0 | 1,750,000 |
| | | | | | 2 | «ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ | 3,425,000 | 0 | 3,425,000 |
| 68 | Միզային Ֆոլեյի կատետեր եռաճյուղ, 20Fr | հատ | 100 | 90000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 120,000 | 0 | 120,000 |
| 69 | Միզային Ֆոլեյի կատետեր եռաճյուղ, 24Fr | հատ | 20 | 18000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 24,000 | 0 | 24,000 |
| 70 | Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե եռաճյուղ, 20 Fr | հատ | 20 | 120000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 300,000 | 0 | 300,000 |
| 71 | Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե եռաճյուղ, 24 Fr | հատ | 10 | 60000 | 1 | «Մեգիէլ» ՍՊԸ | 150,000 | 0 | 150,000 |
| 72 | Ուղղորդիչ միզածորանի ստենտավորումների և նեֆրոստոմիաների համար | հատ | 20 | 540000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 280,000 | 0 | 280,000 |
| | | | | | 2 | «ԱՐ-Մեդիկա» ՍՊԸ | 3,001,000 | 0 | 3,001,000 |
| 73 | Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 14Fr | լրակազմ | 20 | 420000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 350,000 | 0 | 350,000 |
| 74 | Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 16Fr | լրակազմ | 30 | 630000 | 1 | «Երմեդ» ՍՊԸ | 525,000 | 0 | 525,000 |
| 75 | Լուբրի գել | հատ | 500 | 1250000 | | Գնային առաջարկի բացակայություն | | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են), ***բացառությամբ հետևյալ դեպքերի.***

Քանի որ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում Հավելված 2-ում 72-րդ չափաբաժնի մասով «Արժեք» և «Ընդհանուր գինը» սյունակներում թվերով և տառերով արտահայտված տվյալներում առկա էր անհամապատասխանություն, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության պահանջները, վերը նշված չափաբաժինը գնահատելիս գնահատող հանձնաժողովը, որոշեց հիմք է ընդունել «Արժեք» սյունակում լրացված տառերով գումարը (**երեք միլիոն հազար**) ՀՀ դրամ, որը համապատասխանում էր «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված գումարին, (**երեք միլիոն հազար**) ՀՀ դրամ:

**3. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» *ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.***

(Ա. Մաղաքյան)

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

3.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ հետևյալ դեպքերի.***

- **«Երմեդ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված 73-րդ չափաբաժին՝ «Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 14Fr» ապրանքատեսակի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված N1.1-ում, «տեխնիկական բնութագիրը» սյունակում լրացված է *«լափերքային բալոնով 2 ճյուղ 14Fr PVC **կամ համարժեք** նյութից կափեփեր»:* ***Անհրաժեշտ է*** հստակեցնել առաջարկվող ապրանքատեսակը՝ տեխնիկական բնութագրից բացառելով «**կամ համարժեք**» արտահայտությունը:

74-րդ չափաբաժին՝«Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 16Fr» ապրանքատեսակի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված N1.1-ում, «տեխնիկական բնութագիրը» սյունակում լրացված է *«լափերքային բալոնով 2 ճյուղ 16Fr PVC **կամ համարժեք** նյութից կափեփեր»: Անհրաժեշտ է* հստակեցնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքատեսակը՝ տեխնիկական բնութագրից բացառելով «**կամ համարժեք**» արտահայտությունը:

/

- **«Կուրացիո» ՍՊԸ-ի** 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված N1.1-ում, «տեխնիկական բնութագիրը» սյունակում լրացված էր՝ *«Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound **կամ համարժեք** նյութից»:* Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքատեսակները՝ վերը նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերից բացառելով «**կամ համարժեք»** արտահայտությունը:

5-րդ չափաբաժին՝ «Հակամիկրոբային վիրակապ» ապրանքատեսակի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված N1.1-ում, «տեխնիկական բնութագիրը» սյունակում լրացված էր *«Հակամիկրոբային վիրակապ կալցիում ալգինատի և արծաթի* **կամ համարժեք** այլ նյութերի պարունակությամբ»: *Անհրաժեշտ է* հստակեցնել առաջարկվող ապրանքատեսակը՝ տեխնիկական բնութագրից բացառելով «**կամ համարժեք»** արտահայտությունը:

- **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի** կողմից **20-րդ չափաբաժին՝** «CO2 աբսորբեր»*,* ապրանքատեսակի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ Հավելված 1.1-ով առաջարկվել էր «H2O/խոնավություն/ **13-17%***»,* այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվել էր «H2O/խոնավություն/ ***15.2 %-ից ոչ ավել»,*** ուստի մասնակցի կողմից առաջարկված «**13-17%***»* ***ընդունելի չէ,*** քանի որ հրավերով պահանջված *«**15.2 %-ից ոչ ավել»*** տիրույթից բարձ ներկայացնելու պարագայում այն չի համապատասխանի հրավերի պահանջներին: Ուստի անհրաժեշտ է կատարել շտկում և «H2O/խոնավություն/ ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**31-րդ չափաբաժին՝** *«Կոննեկտոր շնչական, գոֆրեային անկյունային, բրոնխոսկոպի պորտով»* ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել է **«գոֆրեաձև 90*»**, սակայն **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի** ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում Հավելված 1.1-ով առաջարկվել՝ «**գոֆրեաձև 90-105*»**, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ուստի անհրաժեշտ է կատարել շտկում և առաջարկվող ապրանքը ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **«Երմեդ», «Նաիրի-Ալանիկա» և «Կուրացիո» ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Քանի որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկով ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 1.1-ում արձանագած անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը տեխնիկական խնդրի պատճառով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps) համակարգի միջոցով ուղարկվել է 29.09.2021թ., ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 29.09.2021թ.-ին ևս մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը /30.09.2021թ./ շտկել անհամապատասխանությունները:

**01.10.2021թ., ժամը 12:30-ին** կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **«Երմեդ»,** և **«Կուրացիո» ՍՊԸ-ների** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, ուստի վերջիններիս հայտերը գնահատեցին բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան, իսկ **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի** կողմից չներկայացվեց ծանուցմաբ արձանագրված անհամապատասխանությունները, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը, որոշեց **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի** հայտը՝ **20-րդ** և **31-րդ** չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0*

3.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով կուղարկվեն լիազորված մարմին:

3.5 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական պարագաների»** ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցների կողմից 25-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 68-րդ, 69-րդ, 70-րդ և 71-րդ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, իսկ 1-6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 21-24-րդ, 26-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-45-րդ, 57-րդ, 59-66-րդ, 73-րդ և 74-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը գների նվազեցման նպատակով **06.10.2021թ. ժամը 10:40-ին** ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում) որոշեց ընտրված մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների՝ («Կուրացիո», «Մի ՎՆԱՍԻՐ», «Երմեդ», «Նաիրի-Ալանիկա» և «Մեգիէլ» ՍՊԸ-ների) հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը՝ «Կուրացիո», «Մի ՎՆԱՍԻՐ», «Երմեդ» և «Մեգիէլ» ՍՊԸ-ներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցեց նշված բանակցության վարման օրվա, ժամի և վայրի մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**<u>4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.</u>**

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել բնակցությունների վարման օրը՝ **06.10.2021թ. ժամը 10:40-ին** ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Նազարյան |
| Գնահատող | Կ. Խաչունց |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Մ. Գալստյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մաղաքյան |